

ՆԵՐԳԱՂԹ, ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ. ԴԻՍԿՈՒՐՍԻՎ  
ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ - ՍՓՅՈՒՌՔ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մինչ բուն նյութին անցնելը անդրադառնամ *գաղթ, գաղթել* բառերին, որոնք անհրաժեշտաբար պետք է օգտագործեն ստորև: Ստ. Մալխասյանցի բառարանը տալիս է հետևյալ բացատրությունը՝ «Թողնել իւր բնիկ երկիրը եւ գնալ այլ երկիր՝ բնակություն հաստատելու»:¹ Նույն բացատրությունն է տալիս Էդ. Աղայանի բառարանը՝ «Հայրենի երկրից հեռանալ եւ բնակություն հաստատել այլ երկրում, գաղթական դառնալ»:² Ա. Ղարիբյանի խմբագրած բառարանում՝ «Որևէ աղետի հետևանքով թողնել իր հայրենիքը՝ բնակավայրը, այլ երկիր տեղափոխվել, գաղթական դառնալ»:³ Ավելի վաղ նման բացատրություն է տվել Հ. Աճառյանը՝ «հայրենիքը թողնելով՝ փախչիլ ուրիշ տեղ երթալ բնակիլը»:⁴ Ինչպես տեսնում ենք, եթե Ստ. Մալխասյանցի և Էդ. Աղայանի մոտ խոսքը ընդհանրապես հայրենիքից, բնիկ երկրից հեռանալու մասին է, ապա Հ. Աճառյանի և Ա. Ղարիբյանի մոտ՝ հենց իսկ հարկադրված հեռանալու (որևէ աղետի հետևանքով, փախչիլ) մասին է: Իմ կարծիքով, այսօր մեզանում գաղթել բառը, որպես կանոն, օգտագործվում է հենց «*փախստական*» իմաստով. վերջին տարիներին Հայաստանից հեռացածների մասին խոսելիս ասում են ոչ թե գաղթականներ, այլ արտագաղթողներ, միգրանտներ, հեռացողներ: Մյուս կողմից պետական համապատասխան հիմնարկները անվանում են

¹ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան: Հ. 1: Եր., 1944, էջ 407:

² Էդ. Աղայան, Արդի հայերեն բացատրական բառարան: Հ. 1: Եր., 1976, էջ 216:

³ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հ. 1: Գլխ. խմբ. Ա. Ղարիբյան: Եր., 1969, էջ 364:

⁴ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան: Հ. 1: Եր., 1971, էջ 505:

«միգրացիոն ծառայություն»: Այլ կերպ ասած, «գաղթել, գաղթական» բառերը հայերենում ունեն որոշակի, ինչպես ընդունված է ասել լեզվաբանության մեջ, կոննոտացիա, ինչը արտահայտություններին հաղորդում է հուզական կամ արժեքային երանգներ եւ արտացոլում է ժողովրդի պատմամշակութային ավանդույթներն ու փորձը: Ահա թե ինչու, երբ ասում ենք գաղթական, գաղթականություն, մենք նախ և առաջ նկատի ունենք հարյուր հազարավոր մարդկանց, որոնք 1915թ. ցեղասպանությունից և բռնագաղթից հետո պարտադրաբար ցրվեցին աշխարհով մեկ:

Նկատի առնելով վերոբերյալ բացատրությունները՝ որքանով է արդարացված նույն այդ մարդկանց անվանել գաղթական կամ փախստական: Նրանց հիմնական մասը ոչ «թողել» էր իր հայրենիքը որևէ աղետի հետևանքով և ոչ էլ հայրենիքը թողնելով՝ «փախել էր» ուրիշ տեղ: Նրանք հենց իսկ բռնագաղթվել էին իրենց հայրենիքից թուրքական իշխանությունների կողմից և մինչ օրս զրկված են հայրենիք վերադառնալու հնարավորությունից: Այլ կերպ ասած, նրանք գաղթականների առանձին տեսակ են, որը հստակ արտացոլում է *վտարանդի* տերմինը: Ի պատասխան արդարացիորեն կասվի, թե մեզանում «գաղթական» և «վտարանդի» տերմինները հոմանիշներ են: Այդ դեպքում, սակայն, ի՞նչ բառով կամ տերմինով պետք է անվանել բոլոր նրանց, որ հեռանում են հայրենիքից կամ երկրից՝ անկախ պատճառներից և ձևից: Պատասխանը հայտնի է. մենք ստիպված ենք ասել «միգրանտ», «միգրացիոն ծառայություն», մինչդեռ կարող էինք ասել «գաղթականական կամ գաղթային ծառայություն»: Ինչպես վերը նշվեց, հենց այսպես է բացատրվում գաղթական բառը Ս. Մալխասյանցի եւ Էդ. Աղայանի բառարաններում:

Հայտնի է, որ որևէ գիտության զարգացման աստիճանի մասին (թե՛ ընդհանրապես և թե՛ այս կամ այն երկրում) կարելի է դատել նրանում մշակված տերմինների առկայությունից, իսկ

գիտական տերմիններին ներկայացվող կարևոր պահանջներից է նրանց թարգմանելու հնարավորությունը: Այս առումով, որքան էլ այն առաջին հայացքից խորթ թվա, գուցե արժի քննարկել հետևյալ տարբերակը. *գաղթական* - мигрант, migrant, *վտարանդի* - изгнанник, exile, *փախստական* - беженец, refugee, *բռնագաղթված* - депортированный, deportee.

Տարիներ առաջ՝ Խորհրդային Հայաստանում Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեությունը ուսումնասիրելիս, ուշադրությունս զրավեց այն, որ 1920-1930-ական թթ. տարբեր տեքստերում, խոսելով Հայաստան գաղթած վտարանդիների մասին, ամենուրեք օգտագործվել է ոչ թե *հայրենադարձություն*, այլ *ներգաղթ* տերմինը: Նույն «ներգաղթ», «ներգաղթողներ» տերմիններին հանդիպեցի հետագայում, երբ անդրադարձա ՀԲԸՄ 1940-ական թթ. պատմությանը: Իմ զարմանքը հասկանալի էր, քանի որ հետպատերազմյան (խոսքը Երկրորդ Աշխարհամարտի մասին է) բոլոր սերունդների նման կարդացել և լսել էի հենց իսկ «հայրենադարձության», «հայրենադարձների» մասին: Ակնհայտ էր, որ նշված բառերի օգտագործումը պատահական չէր և պետք է ունենար իր բացատրությունը: Երբ սկսեցի զբաղվել այս հարցով, պարզ դարձավ, որ տվյալ դեպքում գործ ունենք մի երևույթի հետ, որը ժամանակակից գիտության մեջ նշանակվում է *դիսկուրս* տերմինով: Հիշեցնեմ, որ դիսկուրսը խոսքի կամ տեքստի սոցիալապես պայմանավորված կազմակերպումն է, ինչպես նաև որոշակի սկզբունքներ, որոնց համապատասխան իրականությունը դասակարգվում և ներկայացվում է առանձին ժամանակահատվածներում: Ըստ ռուսաստանցի հայտնի լեզվաբան Ն. Արուտյունովայի պատկերավոր արտահայտության՝ «դիսկուրսը կյանքի մեջ խորասուզված խոսքն է»: Իսկ քանի որ կյանքում կամ իրականության մեջ լինում են տարբեր գործող անձեր՝ անհատներ և խմբեր, կամ ինչպես հիմա է ընդունված ասել՝ ակտորներ, ապա դիսկուրսը անպայմանորեն ունենում է *ինչպիսի*

և *ու՛մ* սահմանումները:

Տվյալ դեպքում ակտորները երեքն են՝ վտարանդիները և խորհրդային իշխանությունները՝ Երևանում և կենտրոնում՝ Մոսկվայում: Վտարանդիների կողմից «ներգաղթ» բառի օգտագործումը թվում է բնական և արդարացված, քանի որ նրանց համար հայրենիքը Արևմտյան Հայաստանն էր և Հայկական Կիլիկիան, ուր նրանց նախնիները ապրել էին դարերով, մինչդեռ Ռուսական կայսրության մաս կազմող Արևելյան Հայաստանը նրանց բացարձակ մեծամասնությանը պարզապես անծանոթ էր: Իրենց գաղթը Խորհրդային Հայաստան անվանել հայրենադարձություն կնշանակեր դավաճանություն իրենց նախնիների հանդեպ, կնշանակեր, որ իրենք վերջնականապես հրաժարվում են իրենց հայրենի օջախները՝ Արևմտյան Հայաստան և Հայկական Կիլիկիա վերադառնալու հույսից: Նկատի առնենք նաև, որ 1920-1930-ականներին Հայաստան գաղթած մարդիկ (ավելի քան 42 հազար) անմիջական գոհերն էին թե՛ ցեղասպանության և թե՛ բռնագաղթի, ուստի և նրանց հիշողություններն ու հոգեվիճակը անկարելի էին դարձնում հայրենիքի մասին գաղափարի կամ պատկերացումների այդչափ արագ փոփոխումը: Այս ամենի պատճառով է, որ վտարանդիները, ավելի ստույգ՝ նրանց մտավոր վերնախավը գաղթը Խորհրդային Հայաստան նշանակեց *ներգաղթ* չեզոք տերմինով:

Շատ ուշագրավ է, սակայն, այն, որ նույն ներգաղթ տերմինը օգտագործվում էր նաև Խորհրդային Միությունում՝ Երևանում և Մոսկվայում: Հայաստանի այդ տարիների ղեկավարները, հավատարիմ լինելով կոմունիստական գաղափարախոսությանը, մինևնույն ժամանակ իրապես ազգային գործիչներ էին, նրանցից շատերը թեև ո՛չ ծնվել և ո՛չ էլ ապրել էին Արևմտյան Հայաստանում կամ Կիլիկիայում (բացառություններից էր Ա. Խանջյանը), սակայն լավ հասկանում էին վտարանդիների մտայնությունը, հայրենիքի վերաբերյալ նրանց պատկերացումները: Ուստի և *ներգաղթ* տերմինի օգտագործումը նրանց

կողմից նույնպես կարելի է բնական համարել: Բայց կար նաև մեկ, շատ ավելի կարևոր հանգամանք՝ Մոսկվայի կենտրոնական իշխանությունների օրինակը:

Արդեն 1920 թվականից Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները մեծ աշխատանք էին տանում ռուս փախստականների (այսպես կոչված սպիտակ էմիգրացիա) մեջ՝ նրանց հայրենիք վերադառնալու (репатриация) նպատակով, 1921թ. նույնիսկ հայտարարվեց քաղաքական համաներման մասին: Թեև այն չդարձավ զանգվածային նույն իշխանությունների կողմից հայրենադարձների նկատմամբ բռնաճնշումների պատճառով, այնուամենայնիվ 1921թ. Ռուսաստան վերադարձավ 121 343, իսկ 1921-1931թթ. ավելի քան 181 հազար մարդ:<sup>1</sup> Բոլոր այս մարդիկ իրապես *հայրենադարձ* էին, *репатриант*. Լրիվ այլ էր հայերի պարագան, այլ էր նաև իշխանությունների վերաբերմունքը նրանց հանդեպ. չեղան ո՛չ բռնաճնշումներ և ո՛չ էլ այլ տիպի պատժամիջոցներ: Այս տարբերությունը ունեցավ իր լեզվական արտահայտությունը. նրանց համարեցին կամ կոչեցին *армяне-иммигранты*, այլ ոչ թե *армяне-репатрианты*: Այստեղ առաջ է գալիս մի հարց, որի պատասխանը ես չունեմ. լեզվական այս սահմանազատումը, տարբեր տերմինների օգտագործումը կատարվեց Մոսկվայի, թե Երևանի իշխանությունների նախաձեռնությամբ: Ամեն դեպքում, այն ամրագրվեց և ստացավ պաշտոնական կարգավիճակ. *Иммиграционный комитет, иммигрантские поселки, иммигрантское строительство* և այլն, *Ներգաղթի կոմիտե, ներգաղթողների ավաններ* և այլն:

Ինչպես հայտնի է, հայերի զանգվածային գաղթը Հայաստան վերսկսվեց Երկրորդ Աշխարհամարտից հետո՝ 1946թ.: Մինչ այդ՝ 1945թ. նոյեմբերի 21-ին, Խորհրդային Միության կառավարությունը Ստալինի ստորագրությամբ ընդունեց այն թույլատրող հաստուկ որոշում, որում օգտագործվում էին հետևյալ ձևա-

<sup>1</sup> В. Ионцев, Н. Лебедева, М. Назаров, А. Окороков. Эмиграция и репатриация в России. М., 2001. С. 210.

կերպումները՝ *армяне-иммигранты, возвращение армян*։<sup>1</sup> 1948թ. կայացած կուսակցության XIV համագումարում Հայաստանի կոմկուսի առաջնորդ Գ. Հարությունովը իր ելույթում օգտագործում է *армяне-переселенцы*, իսկ երեք տարի անց՝ հաջորդ համագումարում՝ *армяне, вернувшиеся из-за границы* բառակապակցությունները։<sup>2</sup> Այդ տարիներին հայերենով գրված տարբեր պաշտոնական գրություններում նույնպես խոսվում է *վերադարձող հայերի* մասին։

Այսպիսով, 1920-1930թթ. ուսերեն *армяне-иммигранты* ձևակերպման հետ մեկտեղ 1940-ականներին սկսում են օգտագործվել նաև *возвращающиеся армяне, армяне-переселенцы*, իսկ հայերենով՝ *ներգադրող հայեր*-ի փոխարեն՝ *վերադարձող հայեր* բառակապակցությունները։ Սակայն համապատասխան պետական հիմնարկների անվանումներում երկու լեզուներում էլ պահպանվում են *иммигрант* և *ներգադրող հայեր* բառերը՝ Комитет по приему и устройству армян-иммигрантов, Արտասահմանից ներգադրող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե։

Կարևորն այն է, որ ինչպես և նախորդ շրջանում չեն հանդիպում *հայրենադարձ, հայրենադարձություն* և *репатриант, репатриация* տերմինները։ Այս անգամ, սակայն, այլ պատճառով։ Ինչպես հայտնի է, Երկրորդ Աշխարհամարտի տարիներին Խորհրդային Միության 6,8 միլիոն քաղաքացիներ հայտնվել էին Գերմանիայում և նրա կողմից գրավված երկրներում։<sup>3</sup> Պատերազմի ավարտից հետո նրանցից ողջ էր մնացել շուրջ 5

միլիոնը, որոնց ընդունված է անվանել *տեղահանված անձինք* (ստիպողական աշխատանքի համար թշվառներ, գերիններ, գերմանացիների հետ համագործակցողներ ևն)։ Ուշագրավ է, որ նրանց մեծամասնությունը վախենում էր ոչ թե նրանից, որ իրենց թույլ չի տրվի մնալ Արևմուտքում, այլ որ իրենց թույլ չի տրվի վերադառնալ Խորհրդային Միություն։ Մինչդեռ մարդկային մեծ կորուստներ կրած Խորհրդային Միությունը ձգտում էր վերադարձնել բոլոր այդ մարդկանց, որոնց մի մասը ենթակա էր պատժի՝ գերմանական, այդ թվում «ազգային» գորամիավորումներում ծառայելու, նացիստների հետ համագործակցելու համար։ Խորհրդային Միության քաղաքացիների տեղահանված անձանց այս վերադարձը, որը տևեց շուրջ յոթ տարի՝ 1945-1952թթ., հենց սկզբից կոչվեց *репатриация* (հայրենադարձություն)։ Արդեն 1944թ. հոկտեմբերին ստեղծվեց Управление уполномоченного СНК СССР по делам репатриации (ԽՍՀՄ Ժողկոմխորհի հայրենադարձության գործերով լիազորի վարչություն), որը հետագա տարիների ընթացքում ղեկավարեց երկրի քաղաքացիների վերադարձի հետ կապված բոլոր աշխատանքները։

Հարկ է նկատել, որ 1945թ. փետրվարին Յալթայում կայացած դաշնակից երկրների ղեկավարների հանդիպման ժամանակ կնքած համաձայնագրերում ամրագրվեց նրանց քաղաքացիների *հայրենադարձության փոխադարձ պարտադիր (взаимная обязательная репатриация)* սկզբունքը։ Վ. Զեմսկովի բերած արխիվային տվյալները փաստում են, որ մինչև 1946թ. մարտի 1-ը հայրենադարձվել էր մոտ 4,2 միլիոն խորհրդային քաղաքացի, այդ թվում՝ 25 063 հայ։<sup>1</sup>

Լրիվ այլ էր պատկերը սփյուռքահայերի 1946-1949թթ. ներգադրի պարագայում։ Առաջինը՝ նրանք Խորհրդային Միության

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 74, թ. 1.

<sup>2</sup> Гр. Арутюнов. Отчетный доклад на XIV съезде коммунистической партии Армении о работе ЦК КП(б)А. Ер., 1948. С. 92; Он же. Отчетный доклад на XV съезде коммунистической партии Армении о работе ЦК КП(б)А. Ер., 1951. С. 78.

<sup>3</sup> В. Земсков. Проблема советских перемещенных лиц (1944-1956) // Россия в XX веке. Война 1941-1945 годов. Современные подходы. М., 2005. С. 519-521.

<sup>1</sup> В. Земсков. Проблема советских перемещенных лиц (1944-1956) // Россия в XX веке. Война 1941-1945 годов. Современные подходы. М., 2005. С. 522.

քաղաքացիներ չէին, և երկրորդը՝ նրանք գալիս էին Խորհրդային Միություն զուտ կամավորության սկզբունքով, այն էլ երկրի ղեկավարի՝ Ստալինի հատուկ թույլտվությամբ: Այս երկու սկզբունքային տարբերությունները արդեն բավական էին, որպեսզի առանձնացնեն նրանց և չանվանեն մյուսների նման *репатриант* կամ հայրենադարձ:

Ինչպես և 1920-1930թթ., *հայրենադարձ* տերմինը չի հանդիպում նաև 1940-ականներին, խորհրդային իշխանությունների ի դեմս վերը հիշատակած Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտեի կողմից սփյուռքին հղած բազմաթիվ գրություններում: Երկու կողմերն էլ, շարունակելով ավանդույթը, իրենց փոխադարձ նամակագրության մեջ գրում են *ներգաղթի* և *ներգաղթողների* մասին: Սակայն սփյուռքահայերի պարագայում նույն այդ բառի օգտագործումը ստանում է մի նոր իմաստ՝ կապված այդ ներգաղթի հանգամանքների հետ:

Խոսքը Ստալինի աշխարհաքաղաքական ծրագրի մասին է, որի հիմնական կետերից էր ռուս-թուրքական պայմանագրով (1921թ., մարտ) Թուրքիային անցած Կարսի և Արդահանի մարզերի վերադարձը: Նկատի առնելով իր դաշնակիցների՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հնարավոր հակազդեցությունը, նա որոշեց այդ նպատակին ծառայեցնել նաև սփյուռքահայերին, նրանց ազգային-քաղաքական սպասելիքները: Սփյուռքահայերը, տեղեկանալով («տեղեկատվության արտահոսքի» շնորհիվ) Ստալինի ծրագրերին, իրենց բազմաթիվ նամակ-դիմումներում ողջունեցին նրա մտադրությունները հայկական տարածքների վերադարձման և ներգաղթի կացմակերպման վերաբերյալ:<sup>1</sup>

<sup>1</sup> Էդ. Մելքոնյան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն: Եր. 2005, էջ 350-358; Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946гг. Под ред. А. Киракосяна. Ер., 2010.

Նրանց ոգևորությունը հասկապես ուժեղացավ 1946թ. փետրվարի 3-ին «Սովետական Հայաստան» պաշտոնաթերթում հրապարակած Հայաստանի կոմկուսի առանորդ Գ. Հարությունովի ճառից հետո, ուր նա ասում էր. «Մենք առաջիկա տարիներում Հայաստանի ներկայիս տերիտորիայում կարող ենք ընդունել մաքսիմում 350-400 հազար մարդ: Այնինչ ցանկացողները ավելի շատ են: Մենք ինչպե՞ս պետք է վարվենք մնացածների հետ: Մնացած 500-600 հազար հայերին ընդունելու համար, մենք հարց ենք դնում, որ Սովետական Հայաստանին վերադարձվեն Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերը: Միայն այդ պայմանով մենք կկարողանանք ընդունել բոլոր ցանկացող հայերին»: Ահա այս հույսն էլ ավելի էր արդարացնում հայրենադարձություն անվանել ոչ թե ներգաղթը Խորհրդային Հայաստան, այլ սպասվող վերադառոճը 30 տարի առաջ կորցրած հայրենիք, թեկուզ և նրա մի մասը:

Սակայն, ինչպես հայտնի է, Ստալինի ծրագիրը ձախողվեց Թուրքիայի և Հունաստանի տարածքային ամբողջականությունը երաշխավորող Տրումենի 1947թ. հայտնի դոկտրինի պատճառով: Պարտություն կրելով իր ավելի հզոր հակառակորդից՝ Ստալինը անիմաստ և ավելորդ համարեց շարունակել հայերի ներգաղթը. եթե 1946-ին Հայաստան ներգաղթեց մոտ 51 հազ, ապա 1947-ին՝ մոտ մեկ երրորդով պակաս՝ շուրջ 36 հազ, 1948-ին՝ 3092, իսկ 1949-ին՝ ընդամենը 162 մարդ: Նույն այդ տարիներին Խորհրդային Միությունում սկիզբ առած սատր պատերազմի, կոսմոպոլիտիզմի դեմ պայքարի պայմաններում գնալով ուժեղանում էր անվստահությունը հայրենադարձների նկատմամբ: Ինչպես նշում է Վ. Ջեմսկովը, «հասարակական գիտակցության մեջ «հայրենադարձներ» («репатрианты») տերմինը ստացավ միանշանակ բացասական իմաստ և գնալով նրանցից ավելի ու ավելի էին խուսափում, ինչպես բորոտ անձերից»:<sup>1</sup> Հայաստանում խոսակցական հայերենում, ինչպես

<sup>1</sup> В. Земсков. Նշվ. աշխ.: С.530.

հայտնի է, նույն բացասական իմաստը ունեցավ «ախպար» բառը: «Ներգաղթողների համար այս անվանումը, - գրում է Ա. Ստեփանյանը, - վերածվեց ճակատին դրոշմած խարանի, որի հետևանքն էր մերժումն ու մեկուսացումը»:<sup>1</sup>

Այսպիսով, կարելի է ասել, որ 1920-1930- ականների և 1946-1948թթ. սփյուռքահայերի գաղթը Խորհրդային Հայաստան ունեցավ իր առանձնահատուկ դիսկուրսիվ տերմինաբանությունը: Վերը նշվել էր, որ դիսկուրսը անպայմանորեն ունենում է *ինչպիսի* եւ *ու՛մ* սահմանումները: Տվյալ դեպքում, այդ տարիների բոլոր գաղթերի և նրանց մասնակիցների վերաբերյալ Խորհրդային Միությունում և Խորհրդային Հայաստանում, որպես կանոն, օգտագործվեցին *ներգաղթ*, *ներգաղթող* տերմինները, իսկ 1940-ականներին նաև *վերադարձող հայեր* ձևակերպումը: Իր հերթին, սփյուռքի հայությունը, ներառյալ Հայաստանի գաղթածները, այդ բոլոր տարիներին հետևողականորեն օգտագործեց *ներգաղթ*, *ներգաղթող* տերմինները: Սակայն, ինչպես նշվեց, այդ նմանության հիմքում ընկած էին սկզբունքորեն տարբեր պատճառներ, որոնք էլ իրենց հերթին պայմանավորեցին հրաժարումը հայրենադարձ, հայրենադարձություն տերմիններից:

Ստալինի մահից (1953) հետո Խորհրդային Միության ներքին և արտաքին քաղաքականությունը կրեց որոշակի փոփոխություններ:<sup>2</sup> Երկրի ղեկավարությունը, ձգտելով էլ ավելի ընդլայնել ԽՍՀՄ ազդեցության ոլորտները, սկսեց դաշնակիցներ ու բարեկամներ ձեռք բերել արդեն ոչ միայն և ոչ այնքան դասակարգային, որքան ընդհանուր քաղաքական շահերի հիման

<sup>1</sup> Ա. Ստեփանյան, 1946-1948թթ. հայրենադարձության ինտեգրման և ադապտացման խնդիրները // 1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախղիքն այսօր: Եր., 2009, էջ 161:

<sup>2</sup> Ա. Վիրաբյան, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով. հասարակական-քաղաքական կյանքը (1945-1957թթ.): Եր., 2001, էջ 198-232:

վրա: Համապատասխանաբար խմբագրվեց և Հայաստանի քաղաքականությունը սփյուռքի հանդեպ: Այս նոր քաղաքականության դրսևորումներից էր նաև սփյուռքահայերի ներգաղթի նոր ալիքը: Արդեն 1955թ. մայիսին Հայաստանի ղեկավարությունը դիմում է այդ հարցով Մոսկվա՝ նշելով մի շարք երկրներից ստացած բացմաթիվ դիմումները, որոնց հեղինակները խնդրում էին թույլատրել իրենց ներգաղթը Հայաստան:<sup>1</sup> Ի վերջո, հարցին լուծում և ընթացք տալու համար 1958թ. ստեղծվեց ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման կառավարական հանձնաժողով, որը քննարկում էր Հայաստան ներգաղթել ցանկացողներից ստացած դիմումները և անհատական կարգով որոշում նրանց թույլատրելու կամ մերժելու հարցը: Սակայն նման ցանկություն հայտնած մարդկանց մշտապես աճող թիվը անհրաժեշտ էր դարձնում նաև զանգվածային նոր ներգաղթի կազմակերպումը, և այդ նպատակով 1961թ. Հայաստանի կոմկուսի և կառավարության որոշմամբ ստեղծվում է կառավարությանը առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե: Ինչպես տեսնում ենք, 1940-ական թթ. պետական համապատասխան մարմինների անվանումներում դեռևս պահպանված *ներգաղթող հայեր* բառերը այժմ փոխարինվում են *վերադարձող հայեր* բառերով, որոնց օգտագործումը դառնում է համատարած: Ուշագրավն այն է, որ այդ տարիներին Հայաստանում ռուսերենով կազմած փաստաթղթերում նույն *возвращение армян, возвращающиеся армяне* բառակապակցությունների հետ սկսվում է հաճախակի օգտագործվել նաև *репатриация* տերմինը: Մյուս կողմից՝ վերանվանվում է վերոնշված Комиссия Совета Министров Армянской ССР по репатриации граждан из-за границы, ինչի արդյունքում *репатриация*-ի փոխարեն վերադառնում է *возвращение армян* արտա-

<sup>1</sup> Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.): Եր., 1985, էջ 249:

հայտությունը՝ Правительственная комиссия по возвращению армян из-за рубежа:

Այն տպավորությունն է ստեղծվում, որ Հայաստանում տեղի է ունենում նոր դիսկուրսի որոնում՝ երկրում տիրող նոր իրականության համապատասխան: Նախորդ շրջանի համեմատ սփյուռքի հետ կապերի աննախադեպ աշխուժացումը, Հայաստան անհատապես ներգաղթելու հնարավորությունը, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի ստեղծումը (1964) առաջացրին որակապես նոր, հուզականությամբ լի մթնոլորտ, երբ հայ ժողովրդի երկու հատվածները կարծես վերագտնում էին իրար: Այս նոր փոխհարաբերություններում գլխավոր դերը, բնականաբար, վերապահված էր Խորհրդային Հայաստանին: Որպես աշխարհի ամենահզոր պետություններից մեկի՝ Խորհրդային Միության լիիրավ մի մաս, իր ազգային-պետական կառույցներով, ակնհայտ առաջադիմությամբ գրեթե բոլոր ոլորտներում Խորհրդային Հայաստանը սփյուռքահայերի մի ստվար զանգվածի համար դարձել էր իրական հայրենիք: Դա հատկապես նկատելի էր սփյուռքահայերի նոր՝ օտար երկրներում մեծացած սերունդների մոտ:

Որակապես նոր պայմաններում նրանց գաղթը Հայաստան ստանում էր նոր իմաստ և բովանդակություն, որոնք անկարելի էր անվանել, ինչպես նախորդ շրջանում, լոկ որպես ներգաղթ, իսկ նրա մասնակիցներին՝ ներգաղթողներ կամ վերադարձող հայեր: Հարկավոր մեկ այլ անվանում կամ տերմին, որը արտահայտեր թե Խորհրդային Հայաստանի հավակնությունը դառնալ ողջ հայության հայրենիքը և թե՛ սփյուռքահայերի ձգտումը՝ ունենալ ոչ միայն պատմական, այլև իրական Հայաստան: Դա, իհարկե, *հայրենադարձություն* բառն էր: Թեև այլևս վերացել էին նախկինում նրա օգտագործմանը խոչընդոտող վերոնշյալ հանգամանքները, այնուամենայնիվ, այն կարող էր քաղաքացիություն ստանալ, եթե հնչեցվեր ամենաբարձր ամբիոնից: Եւ սեպտեմբեր 1966թ. մարտ ամսին կայացած Հայաստանի

կոմկուսի XXIV համագումարում Կենտկոմի առաջին քարտուզար Ա. Քոչինյանը խոսեց «սփյուռքահայերի հայրենադարձության» մասին: Այդուհետ «հայրենադարձության» օգտագործումը դառնում է համատարած, այդ թվում նաև գիտական հրապարակումներում: Կարևորը, սակայն, այն է, որ բոլոր նման աշխատանքներում (այդ թվում նաև իմ հեղինակած) «հայրենադարձություն» են որակվում սփյուռքահայերի ոչ միայն 1960-ականներից հետո տեղի ունեցած, այլև նախորդ տարիների գաղթերը Խորհրդային Հայաստան: Ավելին, Հ. Մելիքսեթյանը իր ընդհանուր առմամբ արժեքավոր մենագրությունում նույն այդ էքստրապոլյացիան տարածում է նույնիսկ պետական հիմնարկների անվանումների վրա: Խոսելով վերոնշյալ Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման կառավարական հանձնաժողովի, ապա նաև կոմիտեի ստեղծման մասին, նա երկու դեպքում էլ գրում է. «այսուհետ այն կրճատ կանվանենք հայրենադարձության հանձնաժողով», «...հայրենադարձության կոմիտե»:՝<sup>1</sup> Ընդհանրապես, էքստրապոլյացիայի տրամաբանությունը նրանում է, որ նա արդեն եղած, ձևավորված պատկերացումները տարածում է նոր, անձանոթ երևույթների վրա՝ դրանով իսկ փոխհատուցելով նոր պատկերացումների բացակայությունը կամ պակասավոր լինելը: Սակայն մեզ հետաքրքրող դեպքում կատարվում է հակառակը. որոշակի ժամանակ ձևավորված պատկերացումները՝ համապատասխան հասկացություններով հանդերձ, փոխարինվում են մեկ այլ ժամանակ ձևավորված պատկերացումներով ու հասկացություններով: Ինչու՞, ենթադրենք՝ պարզ հարմարության համար: Ամեն դեպքում արդյունքը մեկն է. անցյալի վերակառուցումը դառնում է թերի, քանի որ անտեսվում է ուսումնասիրվող օբյեկտի անցյալի մարդկանց գիտակցությունը:

**ԷԴՈՒԱՐԴ Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ**  
պատմագիտության դոկտոր  
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի  
առաջատար գիտաշխատող

<sup>1</sup> Հ. Մելիքսեթյան, նշվ. աշխ., էջ 252, 256: